

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և աօն օրերից)
Յայտա տրութիւն ընդունուում է ամեն լիզուում.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նիկողայոս Տէր-Ղեւոնդեան և իր որդիքը, եկատարինէ և Պետրոս Ասլանեաններ, Մուշեղ քահանայ, Գրիգոր և Պետրոս Տէր-Ղեւոնդեանները ցաօք պատի յայտնելով առաջինը իր ամուսնու, երկրորդները իրանց թանգաղին մօր, երրորդը իր քրոջ, չորրորդը՝ քննու և վերջինները իրանց հարս՝

Ս Օ Փ Ի Ա Տ Ե Ի Ր Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Ա Ն Ի

մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին շնորհ բերել հանդուցեալի յուզարկաւորութեանը իր բնակարանից՝ Կօջորակայա փողոց, առն Շանշեանի № 9, զէպի Մոնոու սուրբ Գեորգ եկեղեցին, կիրակի, օգոստոսի 25-ին, առաւօտեան 10 ժամին: Ամբիճքը կը կատարվի շաբաթ, օգոստոսի 24-ին, երեկոյեան 7 ժամին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոկոսն կուտնիւր չունենք. Հեռագիրներ. Թիֆլիսի քաղաքի պաշտօնական հաղորդագրութիւնը. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ղազարից. Նամակ Ախալքալաքից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ռուսաց դործակալութեան հեռագիրներ. Նամակ Ամերիկայից. Հեռագիրներ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աշխարհի բաները.

ՏՈՒՆԵՆԻ ԿՈՒՈՂՆԵՐ ԶՈՒՆԵՆԻ

Յայտնի փաստաբան Պէլիպի, հերբելով մայրաքաղաքի լրագրներից մէկում այն լուրը, թէ իբր նա մատրի է մի շրջանային ընկերութեան վերատեսչի պաշտօնը յանձն առնել, ասում է. «Ինչ համար սիրելի փաստաբանական պաշտօնը, որին ես նուիրված եմ ամբողջ 30 տարի, այնքան երջանիկ օրեր է տուել ինձ, որ զբաղուած լինելով դրան, ես եմ հասարակական դործում կարողանայի տեսնել: Եւ որքան էլ

զբաղել լինեն ուրիշ զբաղմունքներ, որքան էլ շրջապէս լինեն այն օգուտները, որ կարելի է ստանալ այս կամ այն մասնաւոր դործունէութեան և պաշտօնի մէջ, բայց ես, որ ծերացել եմ մարանչողի պաշտօնում, չեմ փոխի այդ պաշտօնը, եթէ մինչև անգամ նա ամենաչին օգուտ տալիս լինէր, մի պաշտօն, որ ուրիշ ոչ մի հնազանդութիւն չէ ճանաչում, բացի խղճման անկեղծութիւնը և պետական իշխանութեան հնազանդութիւնը: Եւ երբեք չեմ հրաժարվի այն դործից, որ պարունակում է իր մէջ և հասարակական ու հանրամարդկային շահեր և չեմ փոխարինի նրան այնպիսի դործով, որի նպատակը նեղ անձնական շահերն են, մինչև որ մահվան օրէնքը կամ իմ անարժանաւորութիւնը չը ընդհատեն նրան»:

Պէլիպի խօսքերը, եթէ միայն անկեղծ են նրանք, կօնարատեն նա մեր դարի շահարկական ձգտումներն և իրենց անպարկեշտութիւնը: Fin de siècle-ը նշանակում է նրանով, որ այժմ հազուադէպ և բացա-

ռիկ երեւոյթ են կազմում այն մարդիկ, որոնք, մի անգամ ընտրելով իրանց կոչման, խղճմանը, համոզմունքներին, ներքին թելադրութիւններին համապատասխան մի դործ, մի պաշտօն, յարատեւին այդ դործի մէջ, առաջ տանին և շարունակեն յամուծութեամբ, անդրդուելի տոկունութեամբ, անընկճելի հաստատակամութեամբ. չը յուսահատվեն իրանց ընտրած ասպարէզի մէջ որ և է ձախորդութեան, անաղողութեան հանդիպելով. չը շանային, չը դալժակվէին այն փայլուն պէրպէկակները, որ խոստանում և առաջարկում են նրանց ուրիշ ասպարէզներ, և երկար տարիներ անընդհատ դործելով, կուտնելով կամ հասնելին իրանց նպատակին—մարմնացնելին կեանքի մէջ իրանց իդէալները, կամ քաջ գինւորի պէս ընկնելին իրանց ընտրած կուրսի դաշտում:

Այդ կողմից մանաւանդ անմխիթար է հայոց հասարակական կեանքը: Ահա ձեզ մի երկրորդական, որ ուսումը աւարտելուց յետոյ, իր համար դործունէութեան ասպարէզ է ընտրում գրական ասպարէզը, ուսուցչութիւնը, փաստաբանութիւնը կամ այնպիսի մի դործ և պաշտօն, որի մէջ կարող է ծառայել նաև հասարակական և մարդկային շահերին և ամբողջովին կամ մասամբ իրագործել կեանքի մէջ իր դաշտափայտները, համոզմունքները: Բայց բաւական է մի ամենափոքր ձախորդութիւն, անաղողութիւն այդ ասպարէզի մէջ, բաւական է մի յանկարծ նրան ներկայանայ մի աւելի շահաւետ ասպարէզ և նա, թողնելով իր ընտրած, սիրած դործը, նետվում է այդ նոր ասպարէզի մէջ, որտեղ այլ ևս պէտք չի լինի կեանքի հետ տոկուն և յարատեւ կուրս մղել: Եւ մեր երկրորդականները գրեթէ ամենքն էլ, շատ աննշան բա-

ցառութեամբ, այդպէս են վարվում և այդպէս են ընթանում կեանքի մէջ:

Ահա այդ է պատճառը, որ մեր հասարակական կեանքը այնքան աղքատ է տոկուն, անձուկ, չը յուսահատվող և չընկճվող դործիչներով, այնպիսի դործիչներով, որոնք մի անգամ ընտրելով իրանց համար դործունէութեան որ և է ասպարէզ, լինի նա նեղ թէ ընդարձակ, մինչև վերջը հաստատում մնային իրանց կոչման, յարատեւելին իրանց դործում, չը բաժանվէին նրանց և չը փոխէին նրան ուրիշ, անձնական տեսակետից աւելի շահաւոր, ասպարէզների հետ, շրջանով նրանց ընծայած օգուտներից, անցողական շահերից և յարմարութիւններից:

Ամեն մի հասարակական դործիչ, լինի նա գրական դործող, գիւղական ուսուցիչ թէ պրօֆէսոր, փաստաբան թէ դատաւոր, միայն այն ժամանակ կարող է սպասել որ և է արդիւնք իր դործունէութիւնից, իր աշխատանքից, եթէ նա յամուծութեամբ, տոկունութեամբ, հաստատակամութեամբ առաջ տանի իր դործունէութիւնը իր ընտրած ասպարէզի մէջ, առանց փոխելու հասարակական դործունէութիւնը որ և է ուրիշ միայն անձնական տեսակետից ձեռնուռ պարագմունքներով:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Ռուսաց գործակալութիւն)

Կ. Պօլիս, 21 օգոստոսի: Ընդհանուր կարծիքով անվիճելի է համարվում, որ հայերի յեղափոխական դործունէութիւնը ղեկավարում է Լօնդոնի կոմիտէն, իսկ պարտատուութիւնները տեսնվում են Աթէնքի բաժանմունքի ձեռքով:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ա Շ Ի Ա Ր Հ Ի Ս Բ Ա Ն Ե Ր

(Տառիս պատմանքից)

(Շարունակութիւն)

Վերջին անգամ կարմիր կոնակները զգացին, որ անողորմ ճակատագիրը իրանց գցել էր դուր յայտնի աշխարհ: Կաթնի ու մեղրի տակ—գալարվող օձեր, տոբակների մեղեդիներ, որոնք ծածկում են վիշապների վաշտերը, երջանկութիւն, որի հիմքն է թուրքի զօրեղութեան փառքի համար.—հա թէ ինչպէս էր պինդ սեղմել իր կրծքին այն երկիրը, որ երկրի նախնան էր շարժում: Ոչ ոք չը հասկացաւ, որ ծայրահեղ թշուառութիւնը դեռ ևս բաւական չէ հոգին ստրկացնելու և ցեղերի մէջ թաղելու համար: Անուր գրկանքներից կեղեքված մինչև յախտեալանութեան վերջը զրկված չէ աշխարհը իր անէծքներով և տեսլութեամբ պատժելու մեծ իրաւունքից: Յաճախ, համարեա ամեն անգամ, վշտերի մոռացված ու կորած ծոցերից է դուրս գալիս ցնցոտիներով պատած, արեակեղ կարծր մերկացրած աղքատը, որ երկրի կայծակները հաւաքում է իր բերանի մէջ ու կուտնել նրանց իր արեւոյթած սրտի թոյնների մէջ, թափում է աննոգի վիշապների և նենգ օձերի աշխարհի վրա: Եւ ով կարող է փակել նրա սիրան ու բերանը:

Այսպիսի շանթեր հաւաքեց կարմիր գետը և հեռացաւ կաթնի ու մեղրի երկրից: Նա գիւղութիւն էր հայցում.—այդ նրա իրաւունքն էր, ամեն մի թշուառի անվիճելի իրաւունքը: Բայց երբ հացի տեղ քար տեսնին նրան և ձկան տեղ—օձ, նա այդ զաղամային շարեգործութիւնից՝ երես դարձրեց և շարունակեց իր ճա-

նապարհը, տանջանքների ցաւերի անվերջ ճառագարնը: Մեղ շատ անգամ է տանջում այն հարցը թէ ինչ կը դառնայ մի մուրացիկ, որ վաղվում է բոլոր բակերից: Պատասխանը շատ պարզ է.—նա կընչանայ, կը կորչի: Բայց միթէ անպատիժ է մնում այդ ոչնչացումը: Սովորաբար այն երեք ասում, որ, այս, անպատիժ է մնում, որովհետեւ ով է այդպիսի մուրացիկի պաշտպանը: Սա սխալ բան է: Վաղված ինդը իր ծոցում միշտ կրում է մի պատիժ: Դա նրա հպարտութիւնն է... Աշխարհ այդ բանն էլ է հեղուկ: Հպարտութիւն մուրացիկի ծոցում, մեծ բան է... Բայց դա կայ. դա այն զգացմունքն է, որ հեռացնում է թշուառին՝ հաւածող աշխարհից և դարձնում է նրան մի տանջող հասկացողութիւն: Երբ աշխարհի ցաւերը չեն բռնկվում աշխարհային միջոցներիով, այն ժամանակ երկինքն է իր սպեկտրին ուղարկում, տանջվողը դնում է նրան իր սրտի վրա, դնում է իր խաչի ետեւից: Ահա այդ հպարտութիւնը, որի մէջ պահված է մարտիրոսի մեծութիւնը: Մարտիրոս... Դուք հասկանո՞ւմ էք այս հասարակ բառի նշանակութիւնը: Յոյց տուէք որ մարդու պաշտած սրբութիւններից մէկը զբաղեցնում է զանվում: Աշխարհը չարագործ է. բայց պատմվում է.—Այո, յախտեան նա պատիժներ է կրում: Մի սերունդ մարտիրոսներ է պատրաստում, թաղելով նրանց իր վատութիւնների, իր քարասիրտ բարբարոսութիւնների տակ: Ոչ ոք չէ բողբոջում, ոչ ոք կրակ չէ թափում, և չէ ոչնչացնում շարագործներին, և աշխարհը կարծում է թէ այդպէս էլ հարկաւոր է, ընդունում է որ դա բնական կարգ է: Բայց դալիս է յաջորդ սերունդը, հանում է մարտիրոսների նշանները աւերակների տակից և սկսում է պաշտել նրանց: Այդպէս մի սերունդը պատժեց իր նախորդի շարագործութիւնը, և այդպէս էլ յետագայ սերունդը կը պատժէ նոյն այդ պատժով:

Շարագործութիւնը: Միթէ աւելի վատ պատիժ կարող է լինել բան այն, որ հայերի շարագործութեան զօնը որդիների սրբութիւնն են դառնում... Եւ, կարծես, այդ անէծքից մարդկութիւնը երբեք չի աղաւթի, ճանի որ երբեք նրա մէջ չէ հաստատվում մարդկային սիրտը:

Այդպէս էր կարմիր գետի այն ճանապարհը, որ կաթնի ու մեղրի երկրից էր սկսվում: Նա դնում էր ասպարէզի առաջ, որպէս զի ներկայի պատիժը դառնայ: Բայց դեռ մնում էր մի վերջին տեղ ևս, և նրան անտես չարաւ գետը:

Դուրիքի սահմանում, բարձր ու անխախտ, կանգնած էր մի հսկայ ժայռ: Նրա մէջ ապրում էր Դուրիքի թագուհին, որ երբեք լոյս աշխարհում չէր երևում: Ժայռը, թագուհու հրաշակներտ ասպարէզի պատեանը, մտածող և հասկացող բան էր: Նա ներկայացնում էր մի չաղ ու հաստիկ մարդու կերպարանը: Զակատը բաց էր ու լայն, աչքերը խեղճ, և քիչ մեղամաղձառ արտայայտութիւն էին տալիս կուր ու լիքը գէմբին. խիտ, բայց ոչ երկար միւրուքը պատում էր նրա ծնօտը և խառնվելով հաստ բեղերի հետ, համարեա բոլորովին ծածկում էր նրա բերանը: Այդ գերուկ ու խոշոր ձեւերն ու ոտները, շատ լաւ էր ցոյց տալիս թէ ինչ հրաշքներ կարող է գործել փոքր բարեկեցութիւնը: Նրան էր տուած Դուրիքի թագուհու ամբողջ զօրութիւնը, և նա հնչուութեամբ կատարում էր ահագին աշխարհներ: Հոգակված էր նրա անունը, չը կար տեղ, ուր նրան չը ճանաչէին: Եւ դա բնական էր. նրա խօսքը սրտովատ էր ծակում, թաղում էր քամուց էլ արդի և երբեք գետին չէր ընկնում, անկատար չէր մնում: Մեծ խեղճ էր նստած նրա մեծ ճակատի տակ, մեծ ճարտարութիւնը, որ կը ղեկավարէր մարդկանց, եթէ չորսված լինէր լարախաղացի անշունչներին, նստած էր այդտեղ և

հրաշքներ էր գործում մեծ ուղեղի մէջ: Ամենամեծ հրաշքն այն էր, որ աշխարհի բոլոր կողմերում թագուհու անունից խիտ ցանցեր էին զցված, իսկ հսկայ ժայռը գիշեր ու ցերեկ նստում էր և դիտում թէ որտեղ ինչ տեսակ որս կընկնի ցանցերի մէջ: Նա որսում էր ամբողջ երկրներ և երբեք չէր կշտանում: Նա ազատութիւն էր, որին երկինքը պատկել էր՝ տալով մի զաղամային արտօսակ: Նա հակադէպ էր, որ բնութեան ամենախեղճ օրէնքներից մէկը ջրի պտորտութիւնն է, որի մէջ այնքան հեշտ է ձուկ որսալ: Ուստի գիշեր ու ցերեկ նրա գործն էր պղտորել ամեն ինչ, և աչք անկել սիրուն որսերի: Այդ արեւատը նա հայցել էր կատարեալագործութեան, նա ինքը անկեղծ էր մեղքում, եթէ պատի ետեւ թաղնված. դրսում գործում էր նրա հրաշալի ճարտարութիւնը, և երբ պղտորութիւնը բաւական յուսատու էր դառնում, նա պատի ետեւից գցում էր ցանցը և ամենալաւ պատան էր գրաւում: Երբեք տեսնված բան չէ, որ նրա ցանցից մի որ և է որս աղաւթի. նրա կանոնի մէջ չը կար տալ բառը, նա սպառնում էր միւս բառը—առնել:

Այժմ պատմանք մի ուրիշ հրաշք: Կեղեքիչ որսորդը կապել էր ամբողջ աշխարհի աչքը: Դա մի աննշան կախարդութիւն էր, թաղմամբ ուրիշ բան չէր, միայն այն, որ նա խաղաղ էր, կուրց փախչում էր, մի կողմի վրա իրեն կամ մի կաթիլ քրտինք չէր թափում իր ուղածը անելու համար: Աշխարհագրութիւնը կատարեալ էր, զարմանալի: Իր տունը նա դարձաւ ինչ գեղեցիկ բաներով, շարժում էր ամբողջ աշխարհի նախնանք իր անհուն հարստութիւններով: Եւ այդ բոլորի վրա աւելացրեք հրաշագործ լեզուն: Նա օրը հազար անգամ այս ու այն կողմն էր թեքվում, բայց և այդպէս, լաւ խօսքեր էր արտասանում, բարի ցանկութիւններ էր արտայայտում: Օ, թշուառ է մեր

Կ. ՊՕԼԻՍ, 21 օգոստոսի: Մինչև կեսօր քաղաքում այլ ևս չեն եղել կարգը խանգարող դեպքեր:

Կ. ՊՕԼԻՍ, 22 օգոստոսի: Ֆրանսիական զեպանատունը ուղարկեց Մարսել մօտ 50 հայ, որոնք ծառայում էին «Ֆրեզի-Լիօնում» և ֆրանսիական ուրիշ հաստատություններում: Այդպես վարվեց և ուսաց զեպանատունը այն 70 հայերի հետ, որոնք ապաստանվել էին զեպանատան մէջ: Այդ հայերին նաև նստեցնելը տեղի ունեցաւ զեպանատան անդամներին, կապաններին և ֆրանսիական ուսուցչաց նախաձեռնող խմբերի հսկողութեան ու պաշտպանութեան ներքոյ:

ԼՕՆԴՕՆ, 22 օգոստոսի: «Daily News» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ վերջին անկարգութիւնների ժամանակ սպանված թիւը զինուորների թիւը հասնում է 300 կամ 400 հոգու:

Կ. ՊՕԼԻՍ, 22 օգոստոսի: Վերջին դեպքերի առիթով երեկ տեղի ունեցած զեպանական խորհրդակցութեան ժամանակ զեպանները որոշեցին Բ. Կրան բողոք ներկայացնել աւստրո-ունգարական զեպանատան թարգմանի միջոցով, և Բ. Կրան Կ. Պոլսի դէպքերի առիթով զրաժ յիշատակալից զատարանը սկսեց վերջին անկարգութիւնների ժամանակ կաշնաւորված հայերի մեղադրութեան դրծի նախնական քննութիւնը: Կրտսերները, ընդհանրապէս, բարեւորվել է. տիրում է հանդուրժողութիւն: Մագաղանների տէրերը վերսկսել են առեւտուրը: Գործերը նորից կենդանութիւն են ստացել: Ենթադրում են, որ մեծ պետութիւնները մտադիր են զգալի կերպով ուժեղացնել իրանց պատերազմական նսւերը:

ԹԻՒՐԿԱՅ ԴԵՄՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետերբուրգի թիւրքաց զեպանատունը ուղարկել է «Новое Время» լրագրին հետեւեալ թիւրքական պաշտօնական հաղորդագրութիւնը Կ. Պոլսի վերջին անցքերի մասին:

«Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքում հայ անարխիստների ձեռքով կատարված անկարգութիւնները առաջ են բերված հայ յեղափոխականների Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի կողմից, որը լայն ծաւալով կազմակերպել

աշխարհը... Նրան լաւութիւն անողը պիտի լինէր պիտոր ջրերի կարօտ օրսօրը: Սա տեսնված է Բայց ինչ անհա, որ կախարհող լեզու կայ: Լեզուն—զա փափուկ մսի մի կտոր է: Ինչու նրա մէջ չէ դրված մի սուր սակոր, որ ծակէր, ցաւեցնէր ամեն անգամ, երբ նա ծուռ մտքի համար ծուռ է չարժիւմ:—Ձը կայ, զըժբախտաբար, այդպիսի մի արդեւ, և ահա լեզուն այն տեղին է հասցնում, որ նոյն իսկ անգութ ձիւրանների մէջ ծուռաւորված մարդը իր փրկութիւնը հնչեց այդ ձիւրաններից է սպասում:

Այն երկիրը, որ կարմիր գետը հաւաքվեց, Թագուհու ցանցի տակ էր գտնվում: Ուստի գետը շատ շուտ ձանաչեց հսկայ ժպուր, և մի տեղ հաւաքելով ամեն տեղից վառված աղբատի հալորտութիւնը, թառաւ անցաւ այն տաքածութիւնը, որ կար Գովերի Թագուհու և մայր հողի մէջ, սաստիկ թափով դարնվեց չաղ ու լայն կրծքին, երկար ժամեր նա գաւառվեց, կատաղի պառչանք գործեց, մինչև որ կարողացաւ հանդարտվել ժայռը, ի հարկէ, անսասն էր և լսում էր նրան:

—ձանաչում ես ինձ... աղաղակեց կարմիր գետը:

Ժայռը այնպէս ցոյց տուեց թէ իր ականջները շատ էլ լաւ չեն լսում: Բայց այդ ոչինչ... Լաւ էր գետ, որ նա բարոյովին խուլ չէր: Եւ գետը ակսեց իր ձուրը:

—Ձեռ կարող չը ձանաչել ինձ... Ես նա եմ, որին դու ուղիղ տանտութ տարի առաջ գցեցիր ըն թաթերի տակ: Այն ժամանակ ես այսպէս չէի, անտուն, անտէր, քարէքար ընկած: Այն ժամանակ ես ոտի վրա էի, չունչ էի: Ես հերկում էի երկիրը, և իմ ձակատի քրտինքը ոտս գում էր իմ ցանածը, բուսցնում էր իմ օրվայ հացը: Ես ապրում էի այն ժամանակ, հասկանում ես: Ապրում էի, կրելով ուսերիս վրա իմ դառն

էր անկարգութիւնների և յանցաւոր գործողութիւնների ծրագրեր, խիճերական նպատակների հանելու համար: Նրանք, բաժանվելով առանձին խմբերի, մեծ թելով, միաժամանակ, ձեռնարկում են իրանց չարագործութիւնների իրագործման, քաղաքի զանազան կետերում: Բայց այն ատրճանակներից և դաշոյններից, որոնցով զինաւորված են բոլոր յեղափոխականները, նըրանք ամենից շատ գործ էին անում զինամիտով լի երկաթեայ ուսերից: Երէկ, կէսօրվայ մօտ, նրանցից 50 հոգի մահում են փաքրաթիւ խմբերով, որոշ ժամանակամիջոցից յետոյ, օսմանեան բանկի մեծ նախասենեակը: Օրադաճը հարցնում է նրանց, թէ ինչ գործ ունեն և ինչի համար են հաւաքվել այգտեղ, իբրեւ պատասխան, նրանք կրակ են անում նրա վրա, և մի և նոյն ժամանակ սպանում են այդտեղ գտնվող ժանդարմներին և նրանց կտրված գըլուխները դուրս չարտում փողոցը:

«Չուսու քաղելով այդ չարագործութիւնների պատճառով առաջ եկած չիօթութիւնից և անկարգութիւնից, նրանք շտապում են փակել բանկի դռները և ձեռնարկում են աւերման գործին, անդադար ուսմբեր նետելով փողոցը անցորդների վրա և ատրճանակներ արձակելով: Աւերիչ գործիքների բեկորներով շատ անմեղ և խաղաղ բնակիչներ կտար-կտար եղան, և նրանց թիւով չորս թիւրք տիկիներ, որոնք կառքով անցնում էին փողոցով: Բանկի երկու ծառայողներ, ֆրանսիական հոգաւակ Ժօրժ Գրաբէլսկի և Ալֆրէդ Ռիկսի, որոնք փախչում էին պատուհանով չուանների օգնութեամբ, վերաւորվեցին հայերի ձեռքով և միայն զինուորների միջամտութեան շնորհիւ կարողացան ազատել իրանց կեանքը: Նրանց գրաւոր ցուցմունքները զըտնվում են օստիկանութեան միջնորդութեան մէջ: Այն ժամանակ, երբ Ղալաթիկայում տեղի էին ունենում այդ արհեստեղ չարագործութիւնները, Ձէլալ բէյ քարվանսարան, Ստամբուլում, երթարկվեց ուրիշ յեղափոխականների յարձակումներին և ուսմբերի մի տարաւ թափվեց զրացի փողոցների վրա, կոտորելով և հաշմանդամ անելով անցորդներին:

«Խաւքէօյում գլխաւորական զօրաբաժինը ենթարկվեց մի օրիշ խմբի յարձակումներին: Սլայան և շատ զինուորներ սպանվեցին, և միայն մեծ ջանքերից յետոյ աջողեց կաշնաւորել յարձակողներին: Պատմատիայի Սուլթոն-Մոնաստիր թաղում, շատ հայ անարխիստներ, պատնէշների կանդնցիներով, երկար ժամանակ այդ պատնէշու մոտից օրը: Զակատագիրս հեծեծանքն էր, նըրանով էի հովացնում իմ սրտի այրող վէրքը: Գու տեսել ես թէ ինչպէս է եղբայրանում արտասուքը մարդու հետ: Անբաժան, հարազատ եղբայրներ, մէկը միւսին կեանք է տալիս, մէկը միւսին չէ թողնում ոչնչանալ: Ես և իմ եղբայրը—մենք երկիր սիւններն էինք: Մի օր վերկատեց ընից, կանչեցի եղբորս, որ միտան դաշտ գնանք: Բայց եղբայրս այդ առաւօտ փրկվել էր: Նա ցոյց տուեց ինձ ազօթարանը,—այնտեղ հրանքն էր նստել: Մենք, հողի ու գործի մարդիկ, շատ լաւ ենք հասկանում երկրի լեզուն: Եւ այժմ տեսնում էի որ աղօթարանը աւետիք է տալիս մեզ: Հասկացանք: Այն բանը հասկաւ: Նայում համար հարկաւոր չէ ոչ նստել խելը, ոչ ամենամեծ իմաստութիւն: Գու զիտես, երբ կարում ես հաւի ոտները կապած թելը, նա ուրախ-ուրախ թափահարում է իր թիւները և վազում է ամեն կողմ, ամեն մէկին ցոյց տալ ուղում որ ինքը աղատ է: Տեսել ես վանդակում փակված թուշներ, երբ բաց ես անում նրա բանտի դուռը: Մորթվող ոչխարը յուսահատ չարժում է օտները, մի ազատող բան է որոնում, փորձիք այդ ժամանակ յետ քաշել նրա կոկորդի վրա դրած դանակը, թող նա կանգնի, չարժի, որպէս զի իմանայ թէ հողն է նրա օտների տակ,—և ապա նայի: Նրա աչքերի մէջ դու զատված կեանքի ամբողջ քաղցրութիւնը: Խեղճերից անցիր մեծ գաղաններին: Ամեն տեղ մի և նոյնն է: Մեր հայրերը արջի մի գերեզման էին ցոյց տալիս: Մի անգամ մի մարդ աղատեց նրան թակաբողից, և նա այնահետ ծառայեց մարդուն, հարկբարօր բարիքներ աւրաւ իր ստացած ազատութեան համար: Նոյն այդ բանը հասկանում էինք և մենք: Գա օրօրոցի աւանդն է, դա մեր մի մէջ աշխարհ է դա-

ններից և դարոցից սուսեր էին գցում և կրակ էին անում մուսուլմանների և այն տարիկանների վրա, որոնք յորդորում էին նրանց անձնատուր լինելը: Եւ այդպիսով, բազմաթիւ մարդիկ կոտորվեցին: Պատնէշ դարձած տներ, վանքերի և գարոցների մէջ գտնված ուսմբերի թիւը նըրանաւոր է: Պէրալի Պալէկ-Բաղարի հայոց և կեղեցում այսօր առաւօտեան կատարված խուզարկութեան միջոցին գտնվել են բազմաթիւ զինամիտային ուսմբեր:

«Յեղափոխական կոմիտեւը ոչ մի բանից չէ քաշվել մարերը խուսկու և ամբողջ քաղաքում յուզմունք առաջ բերելու համար: Նրանց յանցաւոր ծրագրերը չաջողվեց: Ներքին գործերի միջնորդը անձամբ պատում է փողոցները յորդորելու փողովօրդին՝ հանդարտվել և խաղաղվել: Զինուորական պահակները ման են դալիս փողոցներում և հասարակ յորդորներով ցըրվում են մարդկանց համախմբումները, առանց աղտութեան և դաւանութեան խտրութեան: Օսմանեան բանկը այսօր գիշերը մարդիկ է յարձակվողներին: Մուսուլման փողովօրդը, որի վրա յարձակվել էին յեղափոխականները, պաշտպանվելիս, նոյնպէս կոտորել է յարձակվողներին և վերջիններիս չարքում կան մի քանի սպանվածներ և վիրաւորվածներ:

«Բազմաթիւ հայեր, հաւատարիմ կայսերական կառավարութեան, այն ատիճան զայրացած են իրանց հայրենակիցների չարագործութիւններից, որ հայոց պատրիարքական տեղապօր (Բարթոլոմէոս) մերժել է եկեղեցուց երկկայ անկարգութիւնների բոլոր զրդիներին և յանցաւորներին Հայոց կրօնական համայնքի պետի այդպիսի վերաբերմունքը արդէն միայն բաւական է անուանարկելու այն չարագործներին, որոնք հանդիսանում են իբրեւ զէնք մի այնպիսի գործի, որ մերժված է քաղաքակրթ Նւբոպայից և կոչվում է անարխիզմ ու նիճիլիզմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱԶԱՄԻՅ

Օգոստոսի 16-ին

Անցեալ յալիս ամիս 20 ին մենք գտնվում էինք Ղազարի գաւառի Սրբի գիւղում: Այդտեղ մենք լսեցինք, որ Սրբի գիւղին կից Ամբլուսոյն գիւղում գտնվում է մի յայն բժիշկ կին, որը չբերք կանանց բժշկում է, և նրանք երեւալ են բերում, ի հաստատութիւն իրանց

լիս մեղ հետ: Եղբայրս, արտասուքը, աւելի պինդ զրկեց ինձ, այժմ նա կը թողնէր ինձ, այժմ նա բախտի ընկեր էր: Կուրծքս բաց արի երկնքի առաջ, եղբայրս հստեց ցած, թաց արաւ այդ տախտակը, իսկ նրա տակից դուրս թուաւ մի որոտացող գահութիւն: Աղօթարանը մեր սե օրերի մէջ գեղեցիկ արշաւոյս էր բերել: մեր սրտի կրակոտ օտնոցն էր դէպի նրան ուղղած օրհներգը: Մեր երկրի չարքը ազատաբար պատերազմի մրրկին էր թնդում, խորտակվում էին հաստ-հաստ չղթները, գերութիւնը թանձր մուկ էր դառել և բարձրացել էր սարերի գլուխը, ուր ցրվում էր հեռու, հեռու... Այստեղին անձանթի սարեր ու ձորեր կան այն երկրում, ուր ես թափում էի սարուկի քրտինքը: Նրանք են կարող պատմել մեր ուրախութիւնները, նըրանք կը հասկացնեն թէ ինչ կատաղի վայրենութիւն է պատճառում ազատութեան յոյսը: Պատերազմը վերջացաւ: Երկիրը իր անդ զատաւանն արաւ մեր անգութ գահիճի վրա: Տեսել էին և ինձ ու իմ անբաժան եղբորը: Կարեւրից մարդիկ ինձ համար էլ ունէին մի կտոր բարեբարութիւն, ինձ կեանք տուող կը լինէր մի խաղաղ անկիւն, ուր իմ քրտինքով բուսցրած իմ երեխաներին կը պատկանէր: Իմ եղբայրը ուրախութեամբ հեղեղում էր իմ կուրծքը, երբ ես լսում էի այդպիսի խոստումներ: Եւ ահա, մինչդեռ ես չնապաստաւ սպասում էի իմ ուխտի կատարման, հրապարակ եկար դու, ճիշդ այնպէս, ինչպէս կաւ այժմ, այդպէս լաւ տեսքով: Նստաւ կըլոր: Գու մարդ ես, մահկանացու, կեանքիդ մէջ վայելում ես աշխարհի բոլոր բարիքները, բայց ուղում ես մարգարէ դառնալ, ապագայի համար և քո դրամին շանք դարբերով սպասիլել: Այդ պատճառով սկսեցին գիշերային գործ: Գու թշնամի էի: ազատութեան գործին, որովհետեւ վախում էի թէ ազատողը քո ձեռ-

առածի՝ մի քանի մարդկանց անուաներ տուին, որոնց կանաչքը, իբր թէ երկար ժամանակ երեւալ չեն ունեցել, բայց բժիշկ կնոջ շնորհիւ այժմ մի մի երեխաներ ունեն, և աւելացրին, որ իրանց գիւղի զարբնի կինն էլ ահա երկու ամիս է, որ գտնվում է այդ կնոջ մօտ և բժշկվում է: Գիւղացիները հաւատում էին նաև, որ բոլոր քաջագործութիւնները բժշկուհին կատարում է Աստուծու գորովեամբ:

Մեզ համար այդ բոլորը զարմանալի էր և մենք կամեցանք անձամբ տեսնել բժշկուհուն, ուստի ուղևորվեցինք Ամբլուս գիւղը: Գու շատ չէինք հեռացել գիւղից, երբ պատահեցինք մի խումբ թուրքերի, որոնք սալելով գնում էին նոյնպէս Ամբլուս Բանից երեւոյ, որ նրանց կանաչքը չբերք լինելու պատճառով երեք ամիս է, որ գտնվում են այդ բժշկուհու մօտ, և որովհետեւ ժամանակը չապել է, գնում են յետ բերելու: Մեր հետաքրքրութիւնը աւելի և աւելի էր զօրեղանում, տեսնելով և լսելով այս բոլորը: Երբ տեղ հասանք, մեզ աջողվեց անձամբ տեսնել բժշկուհուն: Գա 40—45 տարեկան մի այրի կին է, որը ապրուստի միջոցներից զուրկ լինելով, իրան արհեստ է ընտրել այդ բժշկութիւնը, նա այժմ մի քանի հաւարներ ունի, գիւղացիներին տոկոսով տուած: Սկզբում այդ կինը մեր ժեց մեր խնդրքը բժշկութեան զաղանիքը մեզ պատմելու: Բայց զինու աղբեղութեան տակ պատմեց, թէ նա բժշկում է բնական, բայց անբարոյական միջոցով... Եւ այդ բժշկական միջոցը չարոնակվում է մօտ երեք ամիս, ժամանակը լրանալուց յետոյ չբերք կնոջ ամուսինը հրաւիրում է յետ վերջնելու յղի կնոջը, վճարելով 80—100 ռուբլի:

Մենք հեռացանք բժշկուհուց, որը ամենամաքաւորական մի կին է, պատահած գիւղացիներին զգուշացնելով: Բայց զրանից հալկաւոր համարեցինք նաև հրապարակով ուշադրութիւն հրաւիրել այդ բացարձակ խաբեւայութեան և անբարոյականութեան վրա:

Մ. Մէլիք-Չահանյան

ՆԱՄԱԿ ԱՍԻԱԿԱԼԱԳԻՅ

Օգոստոսի 12-ին

Այս չարաթ մեր քաղաքի խաղաղ կեանքը խանդավեց մի քանի անցքերով: Փարահանքերում պատահած պայթիւնը ծանր կերպով վիրաւորեց զօրանոցների վրա աշխատող թիւրքահայ մշակներից մէկին: Մի օրիշը, նոյնպէս թիւր-

բից կը խէլ մի քանի պատահներ: Ուստի դու զահանից դարձար մեր անխիղճ դահիճ հետ և ընդգիւմացար մեր աղատութեանը: Յիշում ես, դու պարզ կերպով առացիր որ մենք ապահով կեանքի անարժան ենք, որովհետեւ փոքր բան ենք, և դահիճ դէմ թշնամութիւն կը վարենք: Քո լեզուն այդպիսի ձայներ հանեց արտասուքի մէջ խեղդվածների մասին, քո բաւզուկը ազատեց անգութ գահիճին, դու նրան դարձեալ այժմ և կարողութիւն տուիր, դու նրա կտրված չունչը յետ դարձրիր: Որքան անիծում էինք մենք քեզ, մեր անէծքը քարեր կը ճաքեցնէր, բայց դու անվնաս մնացիր, որովհետեւ քարից էլ պինդ ես և անդադ: Ու երբ դու քո առանց արիւր, երբ արտասուքը նորից եղբայրս դարձաւ, և մենք նորից սկսեցինք պահպանել միմեանց, միմեանց հեցուկ դառնալ, դու լաւ չանված վաճառականի հաշիւներն էիր անում և ուրախ էիր որ մեր գերութեան գնով մեծ շահ ձեռք բերիր: Բայց դու մեղ կախարդեցիր, և մենք չենք իմանում թէ այդ մեծ անիրաւութիւնից յետոյ դու ինչպէս երես ունեցար մեզ երեսուս: Թշուառի արտասուքները դու լաւ գիտես հարստահարել, դու ծախու հանեցիր մեր զգացումները, խոստացար որ մեր օրը կը լաւացնէ, և աշխարհի առաջ, Աստուծու առաջ, ստորագրեցիր այդ պարտագործութիւնը: Մենք հաւատացինք, որովհետեւ ինչ ենք մենք քո փառքի առաջ: Ճիշդ է, դու ուրացար մեզ, ստորագրիր մեզ, բայց մենք բաւականութիւն ստանալ կարող էինք նոյն իսկ մի ամենաթեթեւ բարեբարութիւնից: Տարիներ անցան, դու լուս մնացիր, թէ երբեքիւ որ մենք սպասում ենք քեզ, աղաչում ենք քեզ: Մեր մի աչքը լաց էր լինում, միւսը ծիծաղում էր:

(Կը չարունակվի)

խորհրդ սկզբնապետության ատեն: Այժմ կերպի կրկին ժողովելով թրքական օսկյանը, փոխած է իր յարաբերությունը իրեն: Չարմանալին այն է որ թերթին օսկյան հետ կը փոփոխվին նաև իր թղթակցներու զրկած հետադրերն, նոյն իսկ հանրաժանօթ պատմական զեպերու մասին: Այսպէս, երբ Հերակլիոսի մէջ ջարդ է իրարանցում տեղի կունենայ, հշտարտաւթ թղթակցը պատենութիւն կը գտնէ թիւրք պաշտօնականներու և սպաներու պողարին խոհանութիւնը (1) և արիւթիւնը գովելու: Խնդիր է սակայն թէ թիւրքիան իր արդի սնանկացած դրութեամբ զեռ որքան ատեն պիտի կրնայ իր հաւատարիմ խմբագիր բարեկամներու սիրտը զբաւել...

Արմէն

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիւնի, 20 օգոստոսի: Օգոստոսի 20-ին, երեկոյեան ժամը 6-ին, տեղի ունեցաւ, Բարձրագոյն ներկայութեամբ, զօրահանդէս: Ժամը 5 1/2-ին, Նոյա Մեծութիւնները և Նոյա Բարձրութիւնները եկան արքունի նաւամատոյցը Գրեմարի վրա: Զինուորական իշխանութիւնը, իրան զուլս ունենալով մինիստրին, արդէն գտնուած էր այնտեղ: Կայսրը և Կայսրուհին, Կայսերական տան անդամներին հետ, անցան «Վէստա» արքունի շրջանակի վրա, որտեղից դիտեցին հանդէսը: Հանդէսից յետոյ Նոյա Մեծութիւնները և Նոյա Բարձրութիւնները զբօսանք կատարեցին Գրեմարի վրա: Գետաբեր չքով կերպով լուսավարւած էր: Գաղափար երեկոյեան կատարւած կերպարանք ստացաւ լուսավարութեան շնորհիւ:

Կիւնի, 21 օգոստոսի: Առաւօտեան ժամը 10 1/2-ին, Նոյա Մեծութիւնները եկան Պոկրովսկի վանքը, որտեղ Նոյա զինուորացիներ Մեծ իշխանուհի Ալեքսանդրա Պետրովնա, միաբարձրութեամբ խանութիւն և չորս եպիսկոպոսներ: Նոյա Մեծութիւնները գալուց յետոյ, մենաստանում տեղի ունեցաւ մայր-եկեղեցու հիմնարկութիւնը Ս. Նիկողայոսի օմոնով: Հիմնարկութեան ժամանակ առաջին քարը դրեց թագաւոր Կայսրը, երկրորդ քարը Կայսրուհին: Այդ տեղից, հանդէսը վերջանալուց յետոյ, Նոյա Մեծութիւնները գնացին Պոկրովսկի մենաստանի հիմնադանդը:

Նիժնի-Նովոգորոդ, 21 օգոստոսի: Յուլյանական շինութեան թուական է լրացուցիչ կրկնու 530.000 ռուբլու:

Կիւնի, 22 օգոստոսի: Օգոստոսի 21-ին, ցերեկվայ ժամը 3-ին, հանդիսաւոր կերպով օժից Նիկոլայ I Կայսրի արձանը՝ թագաւոր Կայսրի, Կայսրուհու, Մեծ իշխաններու, Մեծ իշխանուհիներու, մինիստրներ և զօրքերի հրամանատարներ ներկայութեամբ: Արձանի օմոնովց յետոյ Նոյա Մեծութիւնները այցելեցին համալսարանը, որտեղ Նոյա զինուորացիներ հազարաթիւն և բեկտորը: Անցնելով մասնադարանը, Նոյա Մեծութիւնները նայեցին ձեռագիրները և գրքերը ու կէս ժամից յետոյ գնացին Գաղափարի կոլէգիան: Երեկոյեան ժամը 7-ին, պալատում տեղի ունեցաւ Բարձրագոյն հաշ:

Կիւնի, 22 օգոստոսի: Երեկոյեան Նոյա Մեծութիւնները և Նոյա Բարձրութիւնները այցելեցին վաճառականական ժողովարանը և երաժշտական ընկերութիւնը: Նոյա Մեծութիւններին ներկայութեամբ կայացաւ կոնցերտ: Ժամը 10 1/2-ին, կոնցերտից յետոյ, Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին գնալ այդին, որ լուսավարւած էր հազարաւոր ճրագներով և լցված ընտիր հասարակութեամբ: Կիւնիի անհատաւոր վաճառականութիւնը այդտեղ աղ ու հոց մատուցեց Նոյա Մեծութիւններին չքով ավախի վրա:

Մինիստր Լյուսովի մարմին յուլյանականութեանը տեղի կունենայ օգոստոսի 23-ին, առաւօտեան ժամը 9-ին: Մարմինը կը փոխադրվի Մոսկվա:

Կ. ՊՈԼԻՍ, 22 օգոստոսի: Կանէից հաղորդում են, որ քրիստոնեայ պատգամաւորները արտայայտել են իրանց բաւականութիւնը հնորված բեկթորմների մասին և սուրհանգակներ են ուղարկել ապստամբների մօտ, նրանց զէպի համաձայնութիւն բերելու նպատակով:

ԻՍԿՈԶԱՄԱ, 23 օգոստոսի: Օգոստոսի 19-ին աստիկ երկրաշարժ է տեղի ունեցել հիւսիսային նահանգներում: Բնակաջօ քաղաքը ամբողջովին քանդվել է: Հարաւային նահանգները աւերվել են:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Ձերբառի, Ս. ամեն ին թղթակցութիւն, որ է կրում ստորագրութիւն, չի սպաղրվի:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍ, Ս. Տ. Պ. Ձեր նամակը չենք սպաղրի: Համոզված եմք, որ ընթերցողների համար «Մշակի» № 59-ի թղթակցութիւնը արդէն ամեն ինչ պարզել է:

ԿԱՂԱՐՇԱՊԱՍ, Գ. Յարութիւնեան: Հերթումը պէտք է ստորագրի այն անձը, որի անունը յիշատակված է թղթակցութեան մէջ: Այդ պատճառով ձեր հերթումը չի տպագրվի, այլ միայն այն հերթումը, որ կուղարկվի Զանգուղեանների կողմից:

Խմբագիր՝ ԱԼԷՔԱՆԴՐ ԲԱՄԱՆՅԱՆ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅ ՍՈՒՄՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ

ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

Ք. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնեժի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբեր-
ժութեան, սիֆիլիս և վնասեղան հիւանդու-
թիւններին:

Գ. Գ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նարքային հ:

Կին-բժիշկ ԳՈՒՆԱՅԷԼԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11
ժ. կանանց և երեխ. հ:

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻԶ—12—1 ժ. ականջի, կո-
կորդի, քթի և կրծքի հ: Երկուշաբթի, չորեքշաբ-
թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒԴԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե-
խայց և նարքային հ: Երեքշաբթի, հինգշաբթի
և չարաթի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-
խայց հ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ՊՐՈՏԱՍԵՎԻԻԶ—5—6 ժ. երեք. հինգ. և շա-
բաթ:

Ա. Մ. ՓՈՒԴԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի
չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒԴԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և
ոսեղան օրգանների հ: Ներքին և մարթի հ:

Ա. Գ. ԳՈՒԴԿՈ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, ար-
քանի, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախոհորդի (կոսիլիւմի) և
օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերաւանդը՝
բժշկական ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԴՊՐՈՑ

ԳԵՂՈՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Մոսկւանեան վարոց, տուն այլի կողմնակային,
№ 12, քաղաքային բուժարանի դիմաց)
Երեկոյեան ընդունելութիւն ներկայ օգոստո-
սի 27-ից, իսկ ուսան. սկիզբը սեպտեմբե-
րի 4-ից: (№ 98) 1—4

Թարգմանվում են
ՊՐՈՑ. ԵԱՆՈՒԼԻԻ
ԱՅԴԵՐԻ ՀՈՐԵԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
«ՃԱՄԱՆԱԿԻ» և «ՏԱՐԱՄԱՆԻ»
ԹԵԱՆՈՒՆՆԵՐ ՆԵՐԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ: Ա. Ն.
ՄԻ ԺԱՄԱՆԱԿԻ...
(Բէն-Հուր)

Վէպ քրիստոնէութեան առաջին տարիներից
Թարգմ. Սիմ. Հովնաթան (№ 84) 2—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԿ

որ աւարտել է Գեորգեան հեմարանի վեցե-
րորդ դասարանը, մասնաւոր դասըն է փնտռում
գանաղան քաղաքներում: Համաձայն է երգել և
եկեղեցիներում, նաև պատրաստել երգեցիկ
խումբ: Գիմն. ԲԱԿՄ, Կոնորա «Русского об-
щества», Միհրան Տէր-Գրիգորեանցին:
(№ 93) 6—6

ՄՈՍԿՎԱ ԵԿՈՂՆԵՐԻ

ՀԱՄԱՐ
Քաղաքի կենտրոնում, ԲՈԼՇԱՅ ԳՄԻՆԱ-
ՐՈՎԿԱ (Большая Дмитровка) փողոցի
վրա արվում են

ՎԵՐՄԱԼ

Շքեղ կերպով կահաւորված ՀԱՄԱՐՆԵՐ:
Բնակվողների համար կան ամեն տեսակ
յարմարութիւններ՝ ՏԵԼԷՖՈՆ, ՎԱՆՆԱ,
ստացիւմ են ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՅ լրագիր-
ներ և այլն: ԳԵՐԻՐ ԶԱՓԱՆՈՐ ԵՆ:
15—20 (№ 62) Բ. ԱՆԵՏԻՍԵԱՆՑ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ
Վաճառվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Կենտրոնական
գրաւաճառանոցում և Յ. Տէր-Սարգսեանի խա-
նութում, Դմորցովայա փողոց: (№ 78) 5—10

ԲԱԴԱԼ ԵՒ ՆԱԶԱԼԻ ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆՆԵՐԸ խորին ջաւով յայտնելով իրանց
սիրելի որդի
ԱՐՄԵՆ ԲԱԴԱԼԵԱՆ ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆՑԻ
մահը, որ տեղի ունեցաւ օգոստոսի 23-ին, խնդրում են ազգականներին և ծա-
նօթներին՝ հնորհ բերել հոգեհանգստին, որ կը կատարվի այսօր, շաբաթ օր, և-
րեկոյեան 6 1/2 ժամին, իրանց բնակարանում, Ֆրէյլինեան փողոց, տուն Արգու-
տինսկու: Յուզարկաւորութեան մասին կը յայտարարվի առանձին: 1—1

ՍԱՊՈԿՐԷՉՈՒ ԿԷՕԼԷՐԻ
հեղուկ զէպինֆէկցիայի համար.—կարբօնան թթուաթի միաւորումն խեղային սապոնի հետ
զանազանվում է կարբօնան թթուաթից նրանով, որ հեշտ է լուծվում, այդ պատճառով ան-
համեմատ աւելի փոքր քանակութեամբ է պահանջվում, և ահա թէ ինչու սապօկըզօլի օգ-
նութեամբ զէպինֆէկցիան շատ աւելի է ժան է նստում, քան թէ կարբօնան թթուաթով զէ-
պինֆէկցիան: Խեղի սապօնի պարունակութիւնը ինքն իրան ուժեղացնում է կարբօնան թթ-
թուաթի զէպինֆէկցիական յատկութիւնները:
ՋնձուՄ է ՍՄԵՆ ՏԵՍԱԿ ԳԱՐՇԱՀՈՏՈՒԹԻՒՆ
Երախում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈՒՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:
№ 87 (15) 2—3

Բ Ա Գ Ո Ւ
Կատարարութեան քոչառութեամբ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ
(Պարբերաբար իւրաքանչիւր 4—5 ամից յետոյ)
ԵՐԱԳԻՐ. 1) առեւտրական թուաքանութիւն. 2) ՆԱԽԱՅԻՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ, չոգենա-
ւային, առեւտրական և բանկային կրկնակի ՀԱՇՈՒԱԳԱՀՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ (teo-
ria и практика). 3) թուաքանութիւն համրիչի վրա. 4) առեւտրական և մուրհակի կանոնադ-
րութիւն:
Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, պարապմունքները սեպտեմբերի 10-ից:
Դիմել՝ ԲԱԿՄ, Татарская ул. д. № 30, կամ вЪ контору Бакинск. отдѣл. «Бр. Цовьяно-
вы и К.»
6—15 (№ 77) (2) Կատարու-հաշուապահ ԱՐՇԱԿ ՏԵՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻՆ

ՓԱՅՏՈՋԻԼՆԵՐԻ ԵՒ ՈՒՏԻՃՆԵՐԻ ԴԵՄ
ԿԷՕԼԷՐԻ ՀԻՂՈՒԿ
Երախում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈՒՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:
Փարբիկ վրձնով քանել տեղի էլ լաւ այդ հեղուկը սրակերը ամեն տեղ, ուր կան այդ
մակարոցները, իսկոյն և անպայման ջնջում է նրանց՝ բնեւոր և ձուերով, և այնպէս արմա-
տական կերպով, որ միջոցները երկար չեն երևում կրկին:
Հեղուկը անպայն է և բծեր չէ թողնում պատասանների և կարասիքի վրա:
Գինը չարաղանց է ժան է և մատչելի է ամենահամեմատ անտեսութեան համար:
№ 83 (16) 2—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են առ տես տես եր:
Աւանդելի աւարկայք սրանք են՝ 1) Առեւտրական հստեսութիւն, 2) Առեւտ-
րական թուաքանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուաքանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6)
Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղարվութիւն, վառ ձեռքի
ուղղիւր:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում: Սօրակուլում, Ալեքսանդր Բրիգօնովի
տանը, № 9, Սերգիեւկայա և Նազօրեայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և
կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովանօվների բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում
են՝ Тифлисъ, С. П. Мануэляныц.
(Ե. շ.) № 73 14—25

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԷՐ
ՍՆԵԴԱՐԱՐ ԽՄԻՉԲ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև: Անտվերպէնի 1894 թվի համաշխար-
հային ցուցահանդիսում:
Գլխաւոր պահէտը՝ զեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված
կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում: (№ 6) (Ե) 31—50